
**ՀՐԱՄԱՑԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԸ ԳՐ. ՆԱՐԵԿԱՑՈՒ
«ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ» ՊՈԵՄՈՒՄ**

ՅՈՒԶԲԱՇՅԱՆ Ա. Լ.

Հին հայերենի հրամայական եղանակի բայաձևերը, իմաստագործառական տիրույթում լինելով կայուն բայաձևեր, ոճական մեծ արժեք և ուրույն գործառություն ունեն հին հայերենով մատենագրության, մասնավորապես աստվածաբանական գրականության մեջ:

Այս բայաձևերին բնորոշ է բազմիմաստությունը: Նրանք արտահայտում են գործողության կատարման հրաման, հորդոր, խնդրանք, թելադրանք, կոչ, ողջույն, զգուշացում, պատվեր, պատվիրան, պատգամ և այլն: V դ. մատենագրության ցանկացած երկում ակնառու է հրամայական եղանակի բայաձևերի բազմիմաստությունը. նրանք ձևավորում են հրամայական և հորդորական նախադասություններ: Օրինակ՝ Եղիշեն իր «Վասն Վարդանաց և Հայոց պատերազմին» աշխատության մեջ բուն հրամայականի 29 բայաձև գործածել է հրամայական նախադասություններում, որոնք արտահայտում են հրամանի իմաստ, 46 բայաձև՝ հորդորական նախադասություններում, որոնցից 24-ն արտահայտում է խրնդրանքի, 14-ը՝ հորդորի իմաստ, 6-ը գործածված է պայմանական խոսքում: Բուզանդի «Պատմութիւն Հայոց» երկում բուն հրամայականի 25 բայաձև գործածված է հրամայական նախադասություններում՝ հրամանի տարբեր նրբերանգներով (հրաման-հրահանգ՝ 17 օրինակ, հրաման-ծաղր՝ 2 օրինակ), հորդորական նախադասություններում 17 բայաձև արտահայտում է խնդրանքի, 15-ը՝ պատվեր-հանձնարարության, 31-ը՝ հորդորի իմաստ, պայմանական խոսքում՝ 3 բայաձև: Ղ. Փարպեցու «Պատմութիւն հայոց» երկում բուն հրամայականի 67 բայաձև գործածված է հորդորի իմաստով, 27-ը՝ խնդրանքի, 13-ը՝ հրամանի, 2-ը՝ պատվեր-հանձնարարության իմաստով:

Աստվածաբանական գրականության մեջ առավելապես պայմանական է դառնում նրանց հրամայական անվանումը: Բուն, արգելական և հորդորական հրամայականի բայաձևերով են արտահայտված մարդկային բազմազան խնդրանքները, զանազան զգուշացումներ, արգելքներ, աստվածաշնչյան պատվիրանները:

Գր. Նարեկացին իր խոսքն առ Աստված ուղղեց աստվածաշնչյան գրաբարով՝ լեզվական նորմերի դաշտում ստեղծելով իր լեզվամտածողությանը բնորոշ նարեկացիական ոճի այն ուրույն տիրույթները, որտեղ ոչ միայն պատեհ է և տեղին, այլև անփոխարինելի յուրաքանչյուր բառ, լեզվական յուրաքանչյուր կառույց: Նարեկացու հոգու և մտքի թռիչքն արտահայտող քերականական ձևերի մեջ չէր կարող լինել որևէ սահմանափակում: Ահա թե ինչու «Մատենանում» գրաբարը ներկայանում է իր լեզվաոճական կառույցների ողջ հարստությամբ, որի մեջ իր ուրույն տեղն ունի հրամայական եղանակի բայաձևերի իմաստագործառական տիրույթը:

«Գիրք աղօթից», «Նարեկ գիրք աղօթից», «Նարեկ աղօթից». այսպես է հաճախ անվանվել «Մատյանը»: Ավելին՝ «Մատյանի» ֆրանսերեն թարգմանիչ Իսահակ Քեշիշյանն այն անվանել է «Աղոթամատյան», իսկ ռուսերեն թարգմանող Վլադիմիր Միկուշնիչը՝ «Մատյան ապաշխարանքի»¹: Ժողովուրդը ընդունել է «Նարեկը», հավատացել նրա ուժին ու ապավինել նրան, ինչպես Ավետարանին²:

Աստվածային ոգեշնչումով ծնված նարեկյան յուրաքանչյուր տող ունի ներազդման այնպիսի ուժ, որ մտնում է մարդ-ընթերցողի մեջ՝ նրան արթնացնելու, օգնելու, ինքնաճանաչման բերելու և մաքրելու համար: Միրո, հավատի և Լույսի ճանապարհը մարդկային հարաբերությունների, մարդկային մեղսագործ հոգու ամենաբազմազան դրսևորումների միջոցով անցկացնելու և աստվածային մաքրությունը մարդու միտքն ու հոգին հասցնելու համար գրաբարի ընձեռած բոլոր լեզվական կառույցները հեղինակի գրչի տակ նոր երանգ, նոր իմաստ են ձեռք բերել, իսկ եղանակաժամանակային հարացույցների միավորումը իմաստագործական տիրույթում՝ առավելապես, քանի որ չափածո խոսքում նրանք ոճական տարբեր արժեքներ են ստեղծում³:

«Աստվածաշնչում» հրամայական եղանակը, չնայած անվանումին, աղոթքի եղանակ է: Նարեկացու «Մատենանը» աղոթքի ու զոջման, ապաշխարության, ինչպես նաև բարեխոսության մատյան է: Ակնհայտ է «Մատենան ողբերգութեան» երկի վրա «Աստվածաշունչ» մատյանի, հատկապես սաղմոսների ազդեցությունը: Հրամայական եղանակի բայաձևերի հաճախականությունը փաստագրող թվերն անգամ դրա խոսուն վկայությունն են: Այսպես՝ «Գիրք սաղմոսաց»-ում գործածված է արգելական հրամայականի՝ 77, բուն հրամայականի՝ 615 բայաձև և հորդորական հրամայականի՝ ոչ մի, «Մատյան ողբերգության» պոեմում գործածված է բուն հրամայականի 394, արգելական հրամայականի՝ 70 և հորդորական հրամայականի երկու բայաձև⁴, ըստ որում, երկուսն էլ ավետարանական մեջբերումներ են: Դրանցից մեկը «գոգջիք» պակասավոր բայաձևն է. «Գոգջիք զձեզ ծառայս անալիտանս» (Բան, ՀԲ, Ա, էջ 534, հմմտ. Ղուկ., ԺԷ 10): Մյուսը «ողջ եղիջիք» հարադիր կառույցն է. «Յաւէտ զարեղութեամբ՝ ասելով, թէ՛ Ողջ եղիջիք յոգւոյդ խորտակմանէ» (Բան ՀԳ, Բ, էջ 538, հմմտ. Մարկ., Ե 34):

«Ի» լծորդության պարզ բայերի եզակի թվի բուն հրամայականները «Մատյանում» գործածված են և՛ ցոյական հիմքի շեշտումով, և՛ առանց «ց»-ի կառույցների: Օրինակ՝ «ողորմիմ» բայի բուն հրամայականի 10 կիրառությունից 8-ը առանց «ց»-ի է, և 2-ը՝ «ց»-ով, կամ «նայիմ» բայի 4 գործածություններից երկուսը «ց»-ով է և 2-ը՝ առանց «ց»-ի. «Ողորմեա՛ց, Տէր, մահու մեղապարտիս ...» (Բան ՀԳ, Բ

¹ Մանրամասն տե՛ս Քալանթարյան Ժ., Գր. Նարեկացու «Մատենան ողբերգութեան պոեմի և սաղմոսների առնչությունները» (Էջմիածին, 1997, էջ 3):

² Մանրամասն տե՛ս Մահե Աննի և Մահե Ժան-Պիեռ, Գր. Նարեկացին և իր «Մատենան ողբերգութեան» երկը, Ե, 2004, էջ 11, Խաչատրյան Պ., Գր. Նարեկացին և հայ միջնադարը, Ս. Էջմիածին, 1996, էջ 23:

³ Տե՛ս **Յուզբաշյան Ան.**, Գրաբարի ստորադասական եղանակի բայաձևերը Գր. Նարեկացու «Մատենան ողբերգութեան» պոեմում (Կանթեղ, 2003, N 2, էջ 111-119):

⁴ Մենք բերում ենք 1985 թ. հրատարակության տվյալները:

էջ 537), «Ահա ողորմեա՛ ինձ, գթած, աղաչեմ գթեզ, Ողորմեա՛ ինձ, հզո՛ր, կրկին ողորմե՛ա» (Բան ՀԸ, Գ էջ 562), «Նայեա՛ց, ամենահայեաց տեսութիւն կենաց բարութեան յուսոյ...» (Բան ԺԹ, Ա էջ 315), «Նայեա՛ յիս, գթած...» (Բան Ծ, Գ, էջ 444):

Նարեկացին երբեմն արգելական հրամայականի «մի» ժխտական ձևությամբ հեռացնում է բայաձևերից: Ըստ որում, Նարեկացին դա արել է ինչպես չափածոյի հանգավորման, ասելիքի ընդգծման (փոքր-ինչ դադարի ուղեկցումով), այնպես էլ միօրինակությունից խուսափելու համար: Օրինակ՝ ՀԸ գլխի Գ հատվածում գործածված է արգելական հրամայականի 22 բայաձև, որոնցից 6-ում «մի» ձևությամբ հեռացված է բայաձևից, ըստ որում, միաժամանակ, միօրինակությունից խուսափելու համար նա գործածում է «մի» արգելականը ստորադասական II ապառնու բայաձևերի հետ՝ հրամայականի իմաստով.

Մի՛ աստէն զիս փառավորեր, զի անդանաւ դատապարտեսցես,
 Մի՛ նուագութեամբ այսր անցաւորի զյաւիտենական բարիսն տուժեր,
 Մի՛ ի սակաւում այսմ ժամանակի զանվախճանելի զփառսն չափեր,
 Մի՛ ընդ հովտիս վշտաց հեծութեան զանսխրական զկեանսդ գրաւեր,
 Մի՛ ընդ ստուերի այսր մթութեան զանճառելիդ լոյս փոխարկեր,
 Մի՛ զհովիտ հանճարոյս ստուերական պահեր (Բան ՀԸ, Գ, էջ 563):

Ինչպես երևում է օրինակներից, «մի» ժխտական ձևությամբ՝ բայաձևից տրոհված գործածությունը ունի և՛ հանգավորման արժեք, և՛ ոճական նշանակություն, քանի որ այս կառույցներում մինչ կարգելվի այս կամ այն գործողությունը, նշվում են և ընդգծվում գործողության հետ կապված լրացումները:

Արգելական հրամայականով կառույցներում կարող է գործածվել նաև «մի» արգելական ձևությամբ՝ առանց բայաձևի, որը նույնպես ոճական արժեք է ձեռք բերում: Օրինակ՝ ԺԷ գլխի Ա ենթադրյալում կա հրամայական 29 նախադասություն, որոնցից 25-ը կազմված են արգելական հրամայականի բայաձևերով. դրանց հաջորդում է «*մի + ստորադասական*» երկրորդ ապառնու բայաձև, որին հաջորդող տողերում գործածվում է միայն «մի» ժխտական ձևությամբ.

Մի՛ մահացուցաներ զհիւանդս,
 Մի՛ բեռանց ծանրութեան մատներ զտկարս,
 Մի՛ անոտ յաւելուր կարկամեալ թիկանցս,
 Մի՛ կրկնակի ողբումն՝ դառն հեծութեանս,
 Մի՛ ուժգնապէս վարեսցիս առ հողս ... (Բան ԺԷ, Ա, էջ 307):

«Մի» արգելական ձևությամբ նման գործածություններ կան նաև V դարի մատենագրության մեջ: «Մի» ձևությամբ՝ բայաձևից տրոհման 7 օրինակ է տալիս Եղիշեն.

«Մի՛ այլ վասն այդպիսի իրաց հարցաներ զմեզ, այլ զինչ եղեալ է ի մտի ձերում վասն մեր կատարեցեք»⁵: Բուզանդի երկում կա երկու գործածություն. «Պատգամ

⁵ Եղիշեն, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Ե., 1989, էջ 392:

յդէր առ կին մեռելոյն. ասէ՝ զի մի՛ կարի զանձն քո աշխատ առնէր այդչափ...»⁶: Ագաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց» երկում կա «մի» ձևային՝ առանց բայաձևի գործածության երկու օրինակ՝ «Եւ մի՛ խոտորիք ի կարգաց իմաստութեան, մի՛ յաջ և մի՛ յահեակ...»⁷: Եզնիկն ունի մեկ գործածություն. «Յորժամ նստիս ի սեղանն, խոնարհեցո՛ գգլուխդ, մի՛ այլ ինչ տեսաներ...»⁸:

Խորենացին և Փարպեցին չունեն նման գործածություններ: Սա նշանակում է, որ այդ կիրառությունները ստանում են որոշակի ոճական արժեք, դրանք հանդիպում են ոչ բոլոր գործերում, քիչ հաճախականությամբ: Այս տրոհումները հատկապես կատարվում են ընդգծելու համար ոչ միայն ժխտվող գործողությունը, այլև այն լրացումների նշանակությունը, որ գործածվում են բայի և «մի» ժխտական ձևային միջև:

Նարեկացու երկում այս գործածությունների հաճախադեպությունը պայմանավորված է մի կողմից՝ խոսքի չափածո բնույթով, մյուս կողմից՝ խնդրանքի բովանդակության ընդգծման անհրաժեշտությամբ:

Պայմանավորված նյութի բովանդակությամբ՝ Նարեկացին առատորեն գործածել է հարցական և հրամայական նախադասություններ: Հրամայական նախադասությունները կազմվում են ստորադասական ընդգծումով: Բուն հրամայականով կառույցներում տրամաբանական և քերականական շեշտը ընկնում է բայաձևի վրա, և այս նախադասությունները գերազանցապես սկսվում են հրամայականի բայաձևով.

«Հնարաւորեա՛, գթութեա՛նցդ հայր, մեծ խոցուածոյս՝ զօրեղ սպեղանիս» (Բան ԽԸ, Ա, էջ 431):

Հրամայական եղանակի բայաձևերը նարեկյան տողերում արտահայտում են հորդորի տարբեր նրբերանգներ՝ ձևավորելով հորդորական նախադասություններ: Ապաշխարանքի իմաստը և խորությունը ընկալող և դրան ձգտող Նարեկացու՝ ասիեափ լեցուն հոգու թրթիռները բառեր դառնալիս ինքնաբերաբար ստեղծում են քերականական բազմիմաստության ամենատարբեր միջոցներ մի կողմից և միննույն քերականական իմաստի արտահայտման բազմաթիվ ձևեր մյուս կողմից: Հրամայական եղանակի բայաձևերի հետ հորդորի տարբեր իմաստներ արտահայտելու համար Նարեկացին գործածում է ստորադասական եղանակի երկրորդ դեմքի բայաձևեր ինչպես դրական, այնպես էլ ժխտական կառույցներով: Դիտենք «ԽԸ» գլխի օրինակները: Աղերսներն առ Աստված կատարվում են իրար հաջորդող հրամայականի և ստորադասական երկրորդ ապառնու երկրորդ դեմքի շեշտված բայաձևերով.

Բարձրեալ, հզաւր, անսկիզբն, անեղ, անբովանդակելի,
Աննիրհելի ակնդ նկատող, ծնող անքնին փառաց միածնիդ,
Իրաւացուսցե՛ս զիմս ողորմութիւն հերքեցելոյս ընդունելութեան՝

⁶ Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Ե., 1987, էջ 190:

⁷ Ագաթանգեղոս, Պատմութիւն Հայոց, Ե., 1983, էջ 214:

⁸ Եզնիկյան վարդապետի Կողբացոյ, Եղծ աղանդոց, Թիֆլիզ, 1914, էջ 215:

Առ երկնայինս եւ առ երկրաւորս:
Տաւնեա՛ զկեալս կորուսելոյս վերնականացն պարերգութեամբ,
Աւետարանեա՛ բանիւդ աւրինութեան զկենդանութիւն իմ մահացելոյս...(Բան
ԽԸ, Ա, էջ 430):

Այնուհետև ստորադասական ապառնու ժխտական կառույցներով արտահայտվող տարբեր խնդրանքներին՝ *մի՛ փակեցես...*, *մի՛ տրոհեցես...*, *մի՛ պահեցես...*, *մի՛ կնքեցես...*, *մի՛ ծածկեցես...*, *մի՛ մնացուցես...*, հակադրվում են բուն հրամայականի բայաձևերի միջոցով արտահայտված խնդրանքները.

Այլ բա՛րձ բանիւ քոյդ ողորմութեան զժանտութիւնն ապականարար,
Որպէս զի գատեալ ի հիւծմանց ախտից՝ առողջութեանն պատրաստեցայց:
Հնարաւորեա՛, գթութեանցդ Հայր, մեծ խոցուածոյս զաւրել զպեղանիս ... (Բան
ԽԸ, Ա, էջ 431):

Նման գործածությունները հաճախադեպ են «Մատենանում», որոնք ստեղծում են ռճական որոշակի տիրույթ՝ արտահայտելու համար Նարեկացու՝ ամենատարբեր խորություն և հնչեղություն ունեցող խնդրանքներն ուղղված Բարձրյալին:

Հեղինակը հրամայական եղանակի բայաձևերով հաճախ կառուցում է բարդ համադասական նախադասություններ, որոնցում իրար են հաջորդում խնդրանքները՝ աստիճանաբար սաստկացող կամ բովանդակության մեջ առավելապես խորացող: Հաճախադեպ են հնչերանգով կապակցվող նախադասությունները.

Կեցո՛ղիս, գթած, լո՛ւր ինձ, ողորմած,
Մարդասիրեա՛, ներող, խնայեա՛, երկայնամիտ,
Պաշտպանեա՛, ապաւեն, կենսագործեա՛, նորոգող,
Վերականգնեա՛, ահաւոր, լուսա՛ որեա՛, երկնային,
Բժշկեա՛, հնարաւոր, քաւեա՛, անքնին,
Պարգեւագրեա՛, առատ, շնորհագարդեա՛, աննախանձ,
Հաշտեա՛ց, անախտակիր, ընկա՛լ, անոխակալ,
Սրբեա՛ ի պարտեաց, աւրինեալ (Բան Բ, Դ, էջ 252):

Կոչականները շատ հաճախ են կիրառվում հրամայական նախադասություններում: Եթե հրամայական նախադասության մեջ կա որևէ կոչական բառ, ապա այն կա՛մ դրվում է ստորոգյալից հետո, կա՛մ շարադասվում է նախադասության վերջում:

Մի՛ ածեր, *ողորմած*, ինձ օր տարածամ ի համառօտ հետևել,
Մի՛ մատուցաներ բաժակ դառնութեան՝ ի ժամ ծարաւու,
Մի՛ փակեր, *գթած*, իմ հանդէպ՝
Զյաջողուած հոգևոր օգտիս ... (Բան ԶԲ, Զ, էջ 580):

Հաճախ ենք հանդիպում կոչականների կուտակումների. դրանք Աստծուն մեծարող այն բառերով են արտահայտվում, որոնք աստիճանական բովանդակային խորացմամբ ստեղծում են որոշակի խոսքային տիրույթ՝ հորդորական

նախադասության համար: Կոչականների կուտակման միջոցով կարծես Նարեկացին համարձակվում է իրեն թույլ տալ իր հերթական աղերսը ուղղելու Աստծուն՝ հոգու խորքում հավատացած լինելով Աստծու ներողամտության մեջ:

Այլ դու, յամենայնի Տէրդ բարերար,
Լոյսդ ի մեջ խաւարի, աւրինութեանդ գանձ,
Ողորմած, գթած, մարդասէր, կարող,
Զաւրաւոր, անպատում, անքնին, անճառ... (Բան ԺԶ, Բ, էջ 304):

Տողերի ենթատեքստում ընդգծվում է Նարեկացու մեծագույն պատկառանքը Բարձրյալից. այս կառույցները հատվածաբար կարելի է անվանել հորդորական խոսքային տիպոյթներ, որոնք ամբողջական մի միասնություն են կազմում հրամայականի բայաձևով ձևավորված հորդորական նախադասությունների հետ:

Բարդ համադասական նախադասությունները Նարեկացին կապակցում է նաև *և* (միավորիչ), *այլ* (հակադրական) շաղկապներով. «Բա՛րձ գանաւրէնութիւնս իմ, Տէր, եւ ընկեա՛ ի խորս ծովու» (Բան ԼԵ, Գ, էջ 394), «Զի՛նչ քեզ, Տէր, քան զտսին դիւրագոյն, Եւ կամ զի՛նչ ինձ՝ պարտաւորիս կարեւորագոյն, Այլ կենդանագրեա՛, բարեխնամ, Քոյինաստեղծ պատկերիս փշումն կրկին...» (Բան ԶԲ, Ե, էջ 580):

Հրամայական եղանակի բայաձևերը գործածված են նաև բարդ ստորադասական նախադասություններում: Նրանք արտահայտում են գլխավոր նախադասության ստորոգումը, որը խնդրանք է, աղերս, աղաչանք, իսկ լրացում նախադասությունները՝ *ժամանակի պարագա*՝ «յորժամ» շաղկապով սկսվող, կամ *նպատակի պարագա*՝ «զի, որ» շաղկապներով սկսվող երկրորդական նախադասություններ են. «Ազդեա՛ զօրութիւն ձայնի, որ տաս բնաւից ընտրութիւն բանի» (Բան ԼԵ, Գ, էջ 394), «Բա՛ց, հզաւր և գթած, զբժշկարանիդ կենաց վարդապետարան, Զի առ ի ներքոյսն մշակութեան կորուսչին սերմանց՝ Մանգաղաւ կամացդ հուպ առ արմատ խուզեալ հնձեցես» (Բան ԼԵ, Գ, էջ 394), «Յիշեա՛ զիս, յորժամ գայցես արքայութեամբ քո» (Բան ԽԲ, Ա, էջ 412):

Գր. Նարեկացին հրաշալի տիրապետել է «Աստվածաշունչ» մատյանի բոլոր գրքերին և, բնականաբար, կատարել բազմաթիվ մեջբերումներ: Աստվածաշնչյան մեջբերումները հիմնականում ուղեկցվում են «թէ» շաղկապով. «Թէ՛ Դա՛տ արա ինձ, Տէ՛ր, զի ես յանբծութեան իմում գնացի» (Բան Կ, Ա, էջ 480), «Թէ՛ Փորձեա՛ զիս, Տէ՛ր, և տե՛ս, թէ իցեն անաւրէնութիւնքն ի ձեռս իմ» (Բան ԿԱ, Բ, էջ 489), «Թէ՛ Սիրեցէք զՏէր, սուրբ նորա» (Բան ԿԱ, Գ, էջ 490):

Հաճախ հորդորական նախադասությունները ուղեկցվում են խնդրանքը շեշտող բառերով.

Արդ, աղաչեմ զխնամակալդ վտանգաւորաց
Տաժանելեաց կրից թախծութեանց հոգւոց վշտացելոց՝
Մի՛ յաւելուր հեծութեանս ցաւ ... (Բան ԺԷ, Ա, էջ 306)

Պաղատիմ առ քեզ, լուսոյ ճառագայթ ...
Խոնարհեցո՛ զունկն քո, բարձրեալ բարեգութ... (Բան ԺԴ, Ա, էջ 296):

Մեծ է «Աստվածաշնչի» ազդեցությունը Նարեկացու վրա: «Մատենանի» և «Սաղմոսաց գրքի» աղերսները շոշափելիորեն զգացվում են ինչպես բովանդակության, այնպես էլ կառույցների մեջ: Նարեկացին սաղմոսները համարում է իր ամենօրյա ընթերցանության նյութը⁹: «Թե՛ սաղմոսների, թե՛ Մատյանի հիմքում ընկած է խոստովանանքային ճանապարհով Աստծո ողորմածությանն արժանանալու գաղափարը (ողորմածությունն ունի հարուստ բովանդակություն՝ գույք, օգնություն, բժշկություն, փրկություն և այլն): Մեղքի խոստովանություն, զղջում և ապաշխարանք. սրանք երկու ստեղծագործությունների համար էլ հիմնական խնդիրներ են»¹⁰: Համեմատենք՝ «Տե՛ր, մի՛ սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս և մի՛ բարկութեամբ քով յսրատեր զիս» (Սաղմ., Զ 31):

«Մի՛ դարձուցաներ զերեսս քո յինեն, և մի՛ խոտորիր բարկութեամբ ի ծառայեքումսն» (Սաղմ., ԻԶ 81):

«Մի՛ ի բացեայ առնիր յինեն, զի նեղութիւնք մերձեալ են» (Սաղմ., ԻԱ 71):

Ահա ողորմեա՛ ինձ, գթած, աղաչեմ զքեզ,
Ողորմեա՛ ինձ, հզար, կրկին ողորմեա
Մի՛ փոխարկեր երկունս ցաւոց ընդ չարեաց իմոց բարիդ ամենեւին,
Մի՛ բառնար ի վտանգելոյս զառ ի քէն պարգեւեալ շնորհ,
Մի՛ արձանացուցաներ զմեղկութեանցն,
Մի՛ ամբարեր զկորստեանցն,
Մի՛ իբր ստգտեալ իմն ամբաստաներ (Բան ՀԸ, Գ, էջ 562-563):

Այստեղ նույն աղաչական տոնով, հուզականությամբ և կոչականների օգնությամբ արտահայտվում են տարբեր խնդիրներ, հորդորներ:

Հետաքրքիր են Գր. Նարեկացու հոգևոր ապրումները. նրա գերագույն, վեհ գաղափարը աստվածանալու, Աստծուն նմանվելու ձգտումն է. այդ պատճառով մենք «Մատենանում» հանդիպում ենք իրարամերժ 2 գաղափարների. Անհանդուրժողականություն սեփական «ես»-ի հանդեպ, այսինքն՝ ներքին թշնամու դեմ անվերջանալի պայքար և, ընդհակառակը՝ ներման ձգտում և խնդրանք: Ներողամտության գաղափարի գովերգումը բնորոշ է սաղմոսին, և վերջապես Հիսուսը՝ մարդկային մեղքերի համար արյուն էր լալիս. «Աստուած օրհնութեան իմոյ, մի՛ լռեր, զի բերան մեղաւորի՝ բերան նենգաւորի բացաւ ի վերայի իմ» (Սաղ. ԺԸ, 317): Սաղմոսում նկարագրված են մեղավորի բոլոր խարդավանքները, այնուհետև սաղմոսերգուն օգնություն, փրկություն և ողորմություն է հայցում Աստծուց.

«Այլ դու, Տե՛ր, արա՛ ընդ իս ըստ անուան քում, զի քաղցր է ողորմութիւն քո, և փրկեա՛ զիս, զի աղքատ և տնանկ եմ ես:

Օգնեա՛ ինձ, Տե՛ր Աստուած իմ, և փրկեա՛ զիս ըստ ողորմութեան քում» (Սաղմ. ԸԸ, 319):

⁹ Քալանթարյան Ժ., նշվ. աշխ., էջ 19:

¹⁰ Նույն տեղում, էջ 25-26:

Համեմատենք «Մատեան»-ի ՁԳ գլխի հետ. Գր. Նարեկացին ներում է աղերսում թշնամիների համար.

Յիշեա՛յ յայսմ ողբերգութեան մատենի բանիս խոստովանութեան

Եւ գոր ի մարդկային ազնե թշնամիս՝ ի բարի,

Եւ արա՛, կարարեա՛ նոյն քաւութիւն և ողորմութիւն:

Այլ որպէս զչարս կշտամբողաց և իրաւամբք նախատողաց՝ ներեա՛ յանցանաց նոցա (Բան ՁԳ, Ա, էջ 582-583):

Ներումը, ողորմությունը և, ընդհակառակը, հրամանը, կոչը՝ երկու իրարամերժ գաղափարներ արտահայտվում են հրամայական եղանակի բայաձևերով:

Հետաքրքիր է, որ Աստծուն դիմում-խնդրանքները հիմնականում արվում են բուն հրամայականի բայաձևերով: Գր. Նարեկացին մեղքով ծանրաբեռնված մարդու համար հոգևոր և ֆիզիկական բուժում է հայցում: Բուժվելու նպատակով աղերսանքը կատարվում է նույն կամ նման արտահայտություններով. «Բժշկեա՛ զբեկեալ սիրտս, և պատեա՛ զամենայն վերս նոցա» (Սաղմ. ՃԽԶ, 399), «Բժշկեա՛ ի հիվանդութեանցնս ախտից, ողորմած, Յեզերաց մահուս դարձո՛ զիս ի կեանս, կենդանութիւն ...» (Բան ԽԲ, Բ, էջ 413):

Համեմատելով «Սաղմոսաց Գրքի» հետ՝ տեսնում ենք, որ կան նույնիսկ իմաստակառուցվածքային նմանություններ, օրինակ՝ արգելական հրամայականի բայաձևերը արտահայտում են ոչ թե որևէ գործողության արգելք, այլ, ընդհակառակը՝ խնդիրքներ, հորդորներ, աղերսներ, ընդ որում՝ նույն աղաչական և հուզական երանգներով և կոչականների օգնությամբ. «Մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն, և մի՛ խոտորիր բարկութեամբ ի ծառայէ քումմէ» (Սաղմ. ԻԶ, 81), «Տէ՛ր, մի՛ սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս և մի՛ բարկութեամբ քով խրատեր զիս» (Սաղմ. Զ, 31), «Մի՛ ի բացեայ առնէիր յինէն, զի հեծութիւնք մերձեալ են» (Սաղմ. ԻԱ, 71):

«Մատեանի» «ԺԷ» գլխի «Ա» հատվածը ներկայացնում է նույն կառուցվածքով աղերսներ: Գր. Նարեկացին Բարձրյալից՝ Աստծուց, խնդրում է բազմաբովանդակ շնորհներ և առաջին հերթին՝ ստեղծագործելու կարողություն.

Զսկսեալս իմ դու կատարե՛ա,

Եղիցի հոգի քո խառնեալ ի սա,

Շունչ զաւրութեան մեծիդ միասցի՛

Ի քո ինձ շնորհեալ ստեղծաբանութիւնս (Բան Գ, Ե, էջ 258):

Շնորհեա՛ զփոքրն ի տկարէս և շնորհեա՛ զմեծդ առ ի հզարէ,

Շնորհեա՛, Տէ՛ր, անդորրութիւն կենաց հանգստեան

Ողորմելի վաստակեցելոյս ի յընդունայն երկրագործութեանս (Բան ԻԳ, Դ, էջ 334):

Հրամայական եղանակի բայաձևերի իմաստային կիրառությունները հետաքրքիր են իրենց արտահայտած հակասական իմաստներով: Հետաքրքիր է այն փաստը, որ հեղինակը «ողորմությունը» խնդրում է հրամայական եղանակի

բայաձևերով. «Ողորմեա՛ վասն խաչի և չարչարանաց մահու Որդւոյ քոյ, Հայր զթութեան» (Բան ԻԸ, Զ, էջ 356):

Նմանատիպ կառույցների հանդիպում ենք նաև սաղմոսներում. «Ողորմեա՛ ինձ ըստ բանի քում» (Սաղմ. ՃԺԸ, 339), «Ողորմեա՛ ինձ, տէր ...» (Սաղմ. Զ, 29, Լ, 87, ՁԵ, 243):

Չնայած իր անվանումին՝ «Մատենանում» նույնպես հրամայականը «աղոթքի, աղերսի, խնդրանքի» եղանակ է: Սա հրամայական եղանակի ամենահետաքրքիր գործառական հատկանիշն է. մարդը դիմում է Աստծուն՝ Բարձրալին, և դիմում-ստորոգյալները հիմնականում արտահայտվում են հրամայական եղանակի բայաձևերով. «ողորմեա՛», «տո՛ւր», «շնորհեա՛» և այլն: Սրանք իրենց բովանդակության մեջ պարունակում են հիմնականում աղաչանքներ, պաղատանքներ: Հետաքրքիր, նուրբ, թաքնված բովանդակություն ունի Գր. Նարեկացու «ողորմեա՛»-ն: Մեծ մտածողը խնդրում էր հոգևոր փրկություն իրեն և առհասարակ ողջ մարդկությանը. «Ողորմեա՛ վասն խաչի և չարչարանաց մահու Որդւոյ քոյ, Հայր զթութեան» (Բան ԻԸ, Զ, էջ 356):

«Մատենանում» հրամայական եղանակի բայաձևերը ունեն հետևյալ առանձնահատկությունները.

ա) Գործածված են միայն արգելական և բուն հրամայականի բայաձևեր (հորդորական հրամայականի 2 բայաձև կա միայն): Կարծում ենք, որ սա նախ ձևային նմանություն է «Սաղմոսաց գրքի» հետ և ապա՝ «Ստորադասական II ապառնին Նարեկացու մոտ գործ է ածվում իբրև հորդորական հրամայական»¹¹:

բ) Արգելական հրամայականի բայաձևերը գործողության ոչ մի արգելք չեն արտահայտում, այլ միայն աղերսներ են, և միօրինակությունից խուսափելու համար Նարեկացին «մի՛» արգելականը գործածել է նաև ստորադասական II ապառնու II դեմքի բայաձևերի և անորոշ դերբայի հետ.

Մի՛ ջախջախեր զբեկեալս,

Մի՛ գաւշեր զմորմոքեալս,

Մի՛ կուրացուցաներ զխաւարեալս,

Մի՛ մահացուցաներ զհիւանդս (Բան ԺԲ, Ա, էջ 307):

գ) Բուն հրամայականի բայաձևերն արտահայտում են աղաղակ, բարձրաձայն հառաչանք, ողբ, աղերսանք, պաղատանք: Իզուր չէ, որ հրամայական եղանակը եղանակավորություն (*модальность*) ընդհանուր

¹¹ Մանրամասն տե՛ս Առաքելյան Վ., Գր. Նարեկացու լեզուն և ոճը, Ե., 1975, էջ 169, **Յուզբաշյան Ան.**, նշվ. հոդվ., էջ 111-118:

լեզվական կատեգորիայի ոլորտում համարվում է սուբյեկտիվ եղանակ¹²:

«Ուժգնապես զղջումը», «մոլեգնաբար» մեղանշող հոգու ճիչը ուղղվում են առ Աստված բուն հրամայականի բայաձևերով: Գր. Նարեկացին գործածել է բայի տարբեր եղանակաձևերը, ընդ որում՝ տարբեր դեմքերով, թվով¹³, սակայն աղադակները, զղջումը, հոգևոր փրկության և ողորմության աղերսները, ինչպես նաև շնորհները կատարված են հիմնականում բուն հրամայականի բայաձևերով:

ПОВЕЛИТЕЛЬНОЕ НАКЛОНЕНИЕ В “КНИГЕ СКОРБИ” ГРИГОРА НАРЕКАЦИ

ЮЗБАШЯН А. Л.

Резюме

Древнеармянские глаголы повелительного наклонения по своим видо-смысловым признакам являются устойчивыми структурами. Однако им присуща также многозначная смысловая нагрузка.

Употребление этих глагольных форм, выражающих просьбу и мольбу, а также крик души, обращенный к Богу, позволили Нарекаци создать особую, стилистически окрашенную языковую структуру.

В “Книге скорби” Нарекаци глаголы повелительного наклонения не употребляются в форме императива. “Книга скорби” созвучна псалмам.

¹² Տե՛ս Պողոսյան Պ., Բայի եղանակային ձևերի ոճական կիրառությունները արդի հայերենում, Ե., 1959, էջ 23:

¹³ Տե՛ս Առաքելյան Վ., նշվ. աշխ., էջ 149-153: